## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler_armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6 47 22


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«1» հուլիսի 2019 թվականի N 29

## ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 17-ի N 111-Ն որոշումը՝ որոշում եմ.

1. Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Լ. Դ. դյու Ֆուրնե և Ֆր. Վերֆել փողոցների գիշերային լուսավորությունն ապահովող անսարք թողարկիչը նորով փոխարինելու համար տրամադրել 20 000 (քսան հազար) դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, հուլիսի 1
գ. Մուսալեռ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ**
**ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ Ու Մ

«24» հուլիսի 2019 թվականի N 30

## ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 17-ի N 111-Ն որոշումը, 2019 թվականի հունվարի 30-ի N4 որոշումը՝ որոշում եմ.

1. Դրամական օգնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում ծնված երեխաների ծնողներին՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Դրամական օգնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում բնակչի մահվան դեպքում ընտանիքի անդամին՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, հուլիսի 24
գ. Մուսալեռ

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի
N 30 ՈՐՈՇՄԱՆ

# ՑՈՒՑԱԿ

Ծնված երեխաների ծնողներին դրամական օգնություն տալու

| Հ/Հ | Երեխայի ազգանուն, անուն, հայրանունը | Երեխայի ծննդյան օրը | Գումար ստացողի ազգանուն, անուն, հայրանունը | Գումարի չափը |
|---|---|---|---|---|
| 1 | Բաբախանյան Մարկ Արման | 29.04.2019թ. | Բաբախանյան Արման Մայիսի | 30 000 |
| 2 | Գյարաքյան Ռոբերտ Հովհաննես | 22.04.2019թ. | Գյարաքյան Հովհաննես Ռուբենի | 30 000 |
| 3 | Բարսեղյան Արթուր Արամ | 24.04.2019թ. | Բարսեղյան Արամ Արթուրի | 30 000 |
| 4 | Թամազյան Վահե Գաբրիել | 09.05.2019թ. | Թամազյան Գաբրիել Վաչագանի | 30 000 |
| 5 | Ստեփանյան Նարեկ Կորյուն | 18.05.2019թ. | Ստեփանյան Կորյուն Սամվելի | 30 000 |
| 6 | Հարությունյան Գոռ Վահագն | 03.06.2019թ. | Հարությունյան Վահագն Ռադիկի | 30 000 |
| 7 | Պողոսյան Ադրիանա Վահե | 01.07.2019թ. | Պողոսյան Վահե Գուրգենի | 30 000 |
| 8 | Գրիգորյան Հայկ Աշոտ | 06.06.2019թ. | Մուրադյան Մերի Ղազարի | 30 000 |
| 9 | Կիրակոսյան Հայկ Սերոբ | 16.07.2019թ. | Կիրակոսյան Սերոբ Քաջիկ | 30 000 |

Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի
N 30 ՈՐՈՇՄԱՆ

# ՑՈՒՑԱԿ

Հարազատին կորցրած ընտանիքին դրամական օգնություն տալու

| Հ/Հ | Մահացածի ազգանուն, անուն, հայրանունը | Մահվան ամսաթիվ | Գումար ստացողի ազգանուն, անուն, հայրանունը | Գումարի չափը |
|---|---|---|---|---|
| 1 | Մուրադյան Անդրանիկ Դավիթ | 14.07.2019թ. | Մուրադյան Դավիթ Անդրանիկի | 50 000 |

Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
# ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6 47 22

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հուլիսի 2019 թվականի N 31

## ՇԻՆՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱԿԱՄ ՀԱՏՎԱԾԻ
## ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի բնակիչ Արա Նիկողոսի Ռոստոմյանը դիմել է Մուսալեռի համայնքապետարան՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող համայնքի Մ. Մաշտոց փողոցի թիվ 10 հասցեում գտնվող օրինական բնակելի տան 3 քմ մակերեսով ինքնակամ կառուցված պարիսպի օրինականացման խնդրանքով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ին N470-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում՝ որոշում եմ.

1. Օրինական ճանաչել քաղաքացի Արա Նիկողոսի Ռոստոմյանին պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Մ. Մաշտոց փողոցի թիվ 10 հասցեում գտնվող օրինական բնակելի տան 3 քմ մակերեսով ինքնակամ կառուցված պարիսպը:
2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը կազմում է 3 780 դրամ /երեք հազար յոթ հարյուր ութսուն/ դրամ:
3. Սույն որոշման ընդունման օրվանից 60 օրվա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումից ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի

կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզային միավորված ստորաբաժանման կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 թվական, հուլիսի 24

գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» հուլիսի 2019 թվականի N 32

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարան է դիմել քաղաքացի Արա Նիկողոսի Ռուստոմյանը՝ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Մ. Մաշտոց փողոցի թիվ 10 հասցեում գտնվող՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողամասում կառուցված բնակելի տան (հիմք՝ ԱՁ «ԱՎԱԳ ԱՎԱԳՅԱՆ ԳԱԳԻԿԻ» /իրավաբանական անձի պետական գրանցման համարը՝ 99.1027899/ կողմից տրված չափագրություն) գույքային իրավունքները վերականգնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Մ. Մաշտոց փողոցի թիվ 10 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցված բնակելի տան, ավտոտնակի, ծածկի, պահեստի և թռչնանոցի նկատմամբ քաղաքացի Արա Նիկողոսի Ռուստոմյանի /ծնվ. 19.06.1957թ./ գույքային իրավունքները՝ վերականգնելով նրա սեփականության իրավունքը մինչև 2001թ. կառուցված բնակելի տան /93.6քմ/, ավտոտնակի /29.3քմ/, ծածկի /41.4քմ/, պահեստի /1.4քմ/, բաղնիքի և թռչնանոցի /5.8քմ/ նկատմամբ:

Բնակելի տունը, ավտոտնակը, ծածկը, պահեստը և թռչնանոցը բավարարում են «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների պահանջները: Հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի, չեն առաջացնում սերվիտուտ:

2. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Արա Նիկողոսի Ռուստոմյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասում առկա բնակելի տան, ավտոտնակի, ծածկի, պահեստի և թռչնանոցի նկատմամբ՝ տրամադրելով անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
3. Բնակելի տանը տրամադրել Մ. Մաշտոց փողոց, թիվ 10 հասցեն:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 թվական, հուլիսի 25

գ. Մուսալեռ